

ՄԵԼԵԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՂԱՆՑՈ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ԽՈՒՐԱՎԵՐՈՅԱՆ

1885 թ. ապրիլի կաթողիկոսական ընտրություններից հետո առավել շատ ձայներ հավաքած, բայց ոուսաց կայսեր հավանությանը չարժանացած թեկնածուն՝ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրաղյանցը, նախընտրեց խոհեմաբար լռել՝ համոզված, որ ցանկացած տրտունջ կընդունվի իբրև վիրավորված ինքնապիրության արտահայտություն: Տարիներ անց, սակայն, նա պետք է խոստովաներ. «...իմ անձին Ակատմամբ կը յայտարարեմ ահա և անակնկալ պատի տրուած է ինձ, որ իմ արժանատրութենէս շատ ու շատ բարձր է: Այս պատիւն է - իմ ամենասիրելի Ազգիս միահամուռ ընտրութիւնն և Ռուսիոյ կայսեր մերժումն: Երկունս ևս մեծ պատիւ են ինձ...»: Նա շատ լավ գիտակցում էր, որ խնդիրը վեր է անձնական հանգամանքներից, ավելին է: Այն պետք է դիտարկել Եկեղեցու իրավունքների, Եկեղեցու և կրոնի ազատության շարակարգում: Մի խնդիր, որ տարբեր դրսևորումներով գոյություն ունի դեռևս 5-րդ դարից սկսած: Որովհետև Արևելքի ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ այնքան չի կարևորել կրոնական ազատությունը, ինչպես մենք՝ հայերս: Որովհետև հայ ժողովրդի նահատակները հիմնականում մարտիրոսացել են կրոնի ազատության համար:

Ընտրություններից միայն երեք տարի անց նա գրեց «Երկու խօսք Ռուսաստանի հայոց կրօնական եւ կրթական վիճակին վրայ» գրքույկը, որի առաջաբանում այն անվանում է «լոկ մի ստուերագիր»: Հեղինակն այստեղ անդրադառնում է հարցերի, որոնք իրեն անհանգստացրել են դեռևս աշխարհական տարիներից սկսած: Մուրաղյանցը, իր խոստովանությամբ՝ թեև ճարտասան չէ, բայց գիրքը գրել է լայն ընթերցողին շատ մատչելի լեզվով ու ոճով, իր սկզբունքին համաձայն. «...բոլոր սրտէս պիտի խօսիմ. ես ճարտասան չեմ՝ բայց խօսք մը չեմ արտասաներ՝ որ իմ սրտէս բղխած չը լինի և կը հաւատամ որ դուք ես այնպէս պիտի ընդունիք»¹: Ասելիքը հստակ, շիտակ, առանց ավելորդ «ամոթխածության» շարադրելու բարձր կարողությունը դյուրընթեռնելի է դարձնում գրքույկը: Հենց սկզբից ելակետը մեկն է՝ հավատն ու համոզվածությունը, թե հայոց ազգապահպանման փրկարար տապանն է Առաքելական եկեղեցին, որ կենարար ուժ է եղել աշխարհաստան հեղեղների ժամանակ և բոլոր դարաշրջանների միակ ապավենը: Նա մտաբերում է, որ շուրջ երկու տասնամյակ առաջ, չպատկերացնելով անգամ, թե ինքը երբևէ կհրաժարվի աշխարհիկ կյանքից, ավելին՝ Հայրապետական աթոռի հավակնորդ կարող է լինել, գրել է. «Մենք կը հաւատանք և կը խոստովանինք որ ճշմարիտ իրաւունքն մահ չունի, և հայկական ներկայ սերունդն կարող չէ անտարբեր աչօք նայիլ իւր բազմադարեան և բազմաչարչար Մօր վիճակին վրայ. յուսով եմք, որ մեր Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութիւնն, յարատեւութիւնն և քրիստոնէական բազմադրդին պայծառութիւնն պիտի մնայ իբրեւ առաջին նուիրական պարտք թէ ներկայ և թէ ապագայ սերնդին համար, և որ Կաթողիկոսն որ աջակցի այս մեծ գործոյ արդիւնաւորութեանն՝ դարուց ի դարս

¹ Մ. Եպ. Մուրատեանց, Երկու խօսք Ռուսաստանի հայոց կրօնական եւ կրթական վիճակին վրայ, Կ. Պոլիս, 1888, էջ 28:

² Անդ, էջ 8:

օրհնութեամբ պիտի յիշուի իւր անուան ու յիշատակն»³: Ասել է թե՛ նա վաղուց իր համար ճշտել ու հստակեցրել էր հոգևոր առաջնորդի անփոխարինելի, կարևոր դերը ազգապահպանման գործում: Սակայն, ընտրությունների արդյունքներից դժգոհողներին էլ հորդորում էր զգուշանալ անձնավորված պայքարից, դրանք անցողիկ երևույթներ են: «Մեյքիսեդեկը այսօր կայ և վաղն ալ գուցէ կը նընչէ... սակայն Եկեղեցին տասն և հինգ դարէ ի վեր կայ և կը մնայ անշարժ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, և անոր իրաւունքներէն քար մը իսկ խախտելը երբէք ենթելի չէ»⁴: Ուրեմն մտահոգությունը մեկն էր՝ Հայոց հոգևոր սրբատաշ վեմի անասանությունը:

Որքան էլ խուսափի հեղինակը, սակայն իր բարձրացրած հիմնահարցը դիտարկելիս չի կարող շրջանցել Մակար կաթողիկոսի «օտարոտի եղանակով օտարոտի» ընտրությունը, քանզի, կրկնում ենք, սա ոչ անձերի, այլ եկեղեցու ազատության խնդիր է. «...կրօնական ազատութեան խնդիրն՝ ազգային կենաց և գոյութեան խնդիր է Հայուն համար, և այնպէս իսկ միշտ պիտի մնայ, քանի որ Հայ կայ աշխարհի վերայ»⁵:

1917 թ. Եղիշէ Արք. Գեղամյանը, խոսելով դեռ Ներսէս պատրիարքի կաթողիկոսանալու մասին, նկատում է. «Եթէ ուրիշ փաստեր չլինէին՝ հէնց այս մեկն էլ, կարծում ենք, բաւական է մեզ համոզելու, որ սկզբից մինչև այսօր՝ ռուս կառավարութիւնը մեր ազգային եկեղեցական գործերին այնպիսի ընթացք է տւել միշտ, ինչպէս որ ինքն է ցանկացել»⁶: Նույն հեղինակի համոզմամբ, ռուսաց կառավարությունը ի սկզբանէ որոշել էր, որ ռուսահայ եպիսկոպոսներից մեկը պետք է կաթողիկոսանա՞: Ժամանակի մամուլը ուշադիր հետևել ու արձագանքել է այս խնդրին: «Արևելյան մամուլը» 1885 թ. մայիսյան համարում իր ընթերցողներին թարգմանաբար ներկայացրել է «Ռուսկի կուրիեր» օրաթերթում զետեղված թղթակցությունը ընտրությունների մասին: Նյութի հեղինակը, իր հերթին վկայակոչելով եվրոպական պարբերականները, գրում է, թե դրանց մեծ մասի համոզմամբ «...Թուրքիոյ մի նշանատր քրիստոնէական ցեղի իրաւունքներն ու շահերը զոհուած են ռուսական օրինաց անիրաւութեան»: Հեղինակը ակնհայտորեն համաձայն չէ այս պնդման հետ և, թերևս պարզ է, թե ինչու: Իսկ ընդհանրապէս, ժամանակակիցներից շատերն էին համոզված, որ հինգերորդ դարից սկսած ազատության պայքարի պատմության մեջ իբրև խարան պիտի հիշվի հակառակ եկեղեցական ժողովի ընտրության Ռուսիո ցարի որոշումը՝ Մակարին կաթողիկոս կարգելու մասին: Իբրև սև բիծ կմնա նաև պատրիարքների և երեսփոխանական ժողովի մյուս անդամների ստրկական հնազանդությունը և լուրջությունը:

Մտորումների առիթը վերջին ընտրություններն են, իսկ խնդիրը հեղինակը փորձում է դիտարկել սկզբից: Ի վերջո ի՞նչ է եկեղեցու ազատությունը, և որտեղով է անցնում սահմանը: Մտաբերելով Եղիշէի պատմության այն հատվածը, թե. «Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ և ոչ յերկինս այլ աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի», Մուրադյանցն ընդգծում է, որ պատրաստ ենք եղել հնազանդել երկրային ցանկացած տիրակալի, միայն պահպանենք կրօնական ազատությունը: «Հայն Աւետարանն իրեն Հայր դասանած է և Եկեղեցին՝ իրեն Մայր, և երբէք չէ բաժանուած այս Հօրէն ու Մօրէն», - համոզված է նա: Լայն առումով քրիստոնէությունը «...օրէնք է կատարեալ ազատութեան», ուրեմն եկեղեցի կոչվող հաստատությունն էլ հիմնված է այդ

³ Անդ, էջ 12:

⁴ «Արևելեան մամուլ», 1889, թ. 1, էջ 37:

⁵ Անդ, էջ 16:

⁶ Ե. Գեղամեան, Ռուս քիւրսկրատիան և հայերը, Բագու, 1917, էջ 44:

⁷ Անդ, էջ 44:

ազատության վրա: Մ. Արք. Մուրադյանցի համոզմամբ Առաքելական եկեղեցուց դուրս չկա հայություն, իսկ այդ կառույցը չի գոյատևի առանց ազատության. «Եթէ խղճի ազատութիւնն անհատի իրաւունքն է, անշուշտ պաշտաման ազատութիւնն եւս իրաւունք է հասարակութեանց, իրաւունք է ժողովրդոց»⁸: Այս երկուսի միասնությունը հենց կրոնական ազատությունն է, որ այդքան անհրաժեշտ և անկասկտելի է ժողովրդից: Այդ սրբազույն իրավունքի, ազատության այդ բարձրագույն տեսակի նկատմամբ ոտնձգություններ եղել են միշտ: Ի տարբերություն հեթանոսության շրջանի, երբ արտաքին հալածանքն ու հետապնդողը հայտնի էին, հավատացյալներից ջերմեռանդություն էր պահանջվում, նրանք անձը զոհաբերում, մարտիրոսանում էին գիտակցաբար, կամովին, քաջաբար, ապա քրիստոնեության շրջանում գերիշխում է քաղաքականությունը, գերիշխում են կրքերն ու հոգեկոտորության բիրտ կանոնները: Եվ արդյունքը, եզրակացությունը հստակ է. «Հեթանոսութեան դարուց մէջ և ոչ մի քրիստոնեայ հասարակութիւն ջնջուած է կամ կորուսած իր էութիւնն. բայց քրիստոնեական դարուց մէջ՝ խիստ շատ»⁹: Դիպուկ է հեղինակի դիտարկումը: Եվ Ուղղափառ, Կաթողիկ եկեղեցիների դէմ Առաքելական եկեղեցու հարյուրամյակներ տևած մաքառումը դրա վառ օրինակն է: Դրա կենդանի վկաներն են ուծացող գաղթօջախները: Եվրոպայով մեկ սփռված հզորագույն համայնքների գոյության մասին այսօր վկայում են միայն արվեստի, ճարտարապետության նմուշները: Խոսում, բայց մուգ վկաներ...

Մշմարիտ ու շիտակ ուղին մեկն է՝ ոչ քաղաքականությունը պետք է միջամտի եկեղեցու գործերին, ոչ եկեղեցին մասնակցի քաղաքական շահարկումների թոհոբոհին: Նրանք կարող են ու պարտավոր են փոխադարձաբար օգնել, բայց ոչ երբեք գործուն միջամտել մեկմեկու գործերին: Այդ տեսակետից, հեղինակի համոզմամբ, 1700¹⁰ տարեկան Հայ եկեղեցին լիովին վայելել է իր ազատությունը և խղճի ազատության խորհրդանիշ կարող է հանդիսանալ: Սակայն այդ ազատությունը տևել է մինչև 1836 թ.: Այս բեկումնային թվին. «...Ռուսիոյ քաղաքականութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ մտած է, իր քաղաքական նպատակին համար կարգադրած օրէնքով»¹¹: Իսկ միջամտության նպատակը մեկն էր՝ խախտել քրիստոնյա ճշմարիտ եկեղեցու հիմքերը, որը կհանգեցնի ընդհանրապես այդ կառույցի կործանման: Այդ պետության տարածքում հայտնված հայրապետական գահը ասես պատանդի կարգավիճակում էր: Բայց տիրել Հայոց հայրապետությանը դեռ ամենևին չէր նշանակում տիրել հայ հոգիներին: Ռուսաց կառավարության ոտնձգությունը ուղղված է ոչ միայն խղճի ազատության, այլև հայ ժողովրդի հավատարմության դէմ: Ընդամին, պետք է նկատել, որ «Պալատենիայի» դէմ դժգոհությունները սկսվել էին տասնամյակներ առաջ՝ առնվազն 1866 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ. «...այդ կանոնակարգին՝ Ազգ. ժողովոյ որոշմամբ քննութեան առնուելով՝ վնասակար տրամադրութիւնները նշանակուեցան», - դեռևս 1883 թ. գրում է «Արևելյան մամուլը» «Խնդիր Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութեան» հոդվածում¹²: Որոշակի փոփոխություններ մտցնելու լավատեսական ջանքերն ու խոստումները ապարդյուն եղան: Ամսագիրը առաջարկում էր Կ. Պոլսում ի մի հավաքել բոլոր թեմերի ու վիճակների առաջնորդներին և ոչ թե վիճել ու վիճաբանել, այլ ազգաշահ լուծում գտնել ստեղծված իրավիճակում: Հակառակ դեպքում, ընտրությունից առաջ բարձրացած հուզմունքն ու «բոմբիւնը» անցավ, Գևորգ կաթողիկոսը «...աթոռն ալ ելաւ և գերեզման իջաւ»,

⁸ Մ. Մուրադեանց, նշված աշխատությունը, էջ 21:

⁹ Անդ, էջ 23:

¹⁰ Մ. Մուրադյանցը Հայ եկեղեցու հիմնադրման սկիզբ էր համարում Ք. ծ. 34 թվականը: Տե՛ս Մ. Մուրատեանց, Պատմութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1872, էջ 29:

¹¹ Մ. Մուրատեանց, Երկու խօսք..., էջ 25:

¹² Տե՛ս «Արևելեան մամուլ», 1883, թ. 2, էջ 88:

իսկ խնդիրը տակավին կա, անփոփոխ է¹³։ Բայց ինչ-որ բան փոխելու այդ ջանքերը զուր էին, անօգուտ։ Դարձյալ նույն հողավածաշարի հեղինակի դիտարկմամբ. «Իրա՛ւ՝ Պալաժենիայի մասին բողոքներ և անուղղակի ակնարկություններ եղան այդ սրբագուժար ատեսանին մէջ, բայց առանց եզրակացութեան, վասն զի Կաթողիկոսական Յանձնատեղովն և Ազգային ժողովն կնկատուէին իբրև միակ ձեռքահաս իշխանություններ այդ խնդիրը լուծելու, թէև արդէն յայտնի կտեսնուէր և օրագիրներու հրատարակած տեղեկություններէն կհետևէր, որ անոնք Ռուսաստանէն պատգամներ ընդունելու համար կարծես կազմուած էին»¹⁴։

Իբրև Ռուսաց կայսրության սահմաններում ծնված ու հասակ առած մարդ, որ լավ է ճանաչում, գիտակ է տիրող կարգերին, Մելքիսեդէկ եպիսկոպոսը զուգահեռներ է անցկացնում։ Ռուսաց եկեղեցին ևս գտնվում է քաղաքական իշխանության վերահսկողության տակ։ Այդ կարգավիճակը զորացավ ու ամրագրվեց Պետրոս Մեծի իշխանության օրոք։ Նա վերագրեց պատրիարքական արտոնությունը և ստեղծեց եկեղեցական ժողով՝ կարգորդիչ կամ կառավարիչ Սինոդ, որը լիովին կախված էր կայսեր իշխանությունից։ Փաստորեն Ռուսաց եկեղեցու նվիրապետության գագաթին կանգնած է ինքնակալը։ Սակայն, մի շատ կարևոր տարբերիչ հանգամանք կա՝ այդ ժողովրդի գլխին սպառնալիորեն կախված չէ կորստյան վտանգը։ Հեղինակը համոզված է, որ կգա այն օրը, երբ ռուս հոգևոր իշխանությունը ազատ կլինի քաղաքականից։ Մինչդեռ Հայ եկեղեցու ինքնիշխանության կորստի համար մենք կարող ենք թանկ գին վճարել։ Այն, ինչը ռուս կառավարությունը մեծահոգաբար խնամակալություն է անվանում, իրապես տիրապետություն է հոգևոր կառույցի վրա, «որով անձայն և անշշուկ մեր Եկեղեցին կը կողոպտուի իւր դարաւոր հարստութենէն. քանզի չը կայ հարստութիւն առաւել բարձր, առաւել թանկագին քան կրօնի ազատութիւնն, քան խղճի ազատութիւնն...»¹⁵։ Իսկ բռնության դեմ հլուհնազանդ համակերպվելը, անմոռն սպասելը ինքնասպանություն է հայոց համար։ Լռել նշանակում է մեղանչել այն հարյուրավոր նահատակների հիշատակի առջև, ովքեր աներկբայորեն մարտիրոսացան հանուն խղճի ազատության։ Հեղինակի համոզմամբ մոլորված են նրանք, ովքեր կարծում են, թե դժգոհության ու բողոքի դեպքում կործանիչ վտանգ կապառնա Հայոց հայրապետության։ Վտանգը լռության մեջ է։ Մի՞թե ազատությունը զոհելով՝ կանգուն կմնա կառույցը։ Եվ բոլոր մոլորյալների համար Մուրադյանցը մեկ անգամ ևս փաստում է, թե Ռուսիո կառավարության հետ քաղաքական խնդիր չէ, այլ բարոյական հիմնահարցեր ունենք։ Ու պարտավոր ենք ցույց տալ աշխարհին, որ անշեջ է կրոնական եռանդը, սերը, նախանձախնդրությունը։

Ի դեպ, Օրմանյան արքեպիսկոպոսը Մակար Թեղուտցու ընտրության հետ կապված ավելորդությունների մասին գրելիս նկատում է. «Մանրածանր պատճառաբանություններ կը խօսուէին, թէ եկեղեցական ազատութիւնը բռնաբարուած է, թէ Հայ Եկեղեցին վտանգուած է, թէ հայուն կրօնը անարգուած է, եւ ամէն ինչ որ կը խօսուէր, կը գրուէր ալ, եւ գրգռութիւնը անցնելու փափաքողներ իրենց բացատրութեանց չափ ու կոպար չէին դներ։ Բայց այս առաջին տպաւորութիւնները հետըզհետէ չափաւորուեցան...»¹⁶։ Սակայն, կարծում ենք՝ Օրմանյանը առավել քան զուսպ գնահատական է տալիս։ Այո՛, վերջնական ընտրության իրավունքը Ռուսաց ինքնակալին զիջելով՝ իրապես սահմանափակվում էին Հայ եկեղեցու իրավունքներն ու ազատությունը։ Իսկ կրքերը 1885 թ. ի վերջո հանդարտվեցին, ու ժողովուրդը համակերպվեց կատարվածի հետ, որովհետև չկամեցան ազգը պատակտող անօգուտ հակադրությունը շարունակել։ Միևնույն է, որոշումը անշրջելի էր։

¹³ Տե՛ս անդ, էջ 94։

¹⁴ «Արևելեան մամուլ», 1884, էջ 147։

¹⁵ Նույն տեղում, էջ 31։

¹⁶ Մ. Արք. Օրմանյան, Ազգապատում, Բ. Գ. Կ. Պոլիս, 1912, էջ 4541։

Մելքիսեդեկ եպիսկոպոսը բուն աշխատության դիտարկվող հատվածը ավարտում է առ Աստված ուղղված «աղաղակով», թե նենգությունն ու անձնական շահը չեն, որ ստիպեցին անդրադառնալ այդ խնդրին, որը, ի դեպ, լուրջ էր, մտահոգիչ և ժամանակի շատ գործիչների ուշադրության ծիրում էր հայտնվել:

Աշխատության «Ցաւելուածում» ամփոփված են 1885 թ. ապրիլի 21-ի կաթողիկոսական ընտրության մասին պաշտոնական գրությունները:

Կրոնական ազատությունների մասին խոսելուց զատ, Մուրադյանց արքեպիսկոպոսը հարկ է համարում անդրադառնալ նաև կրթական ազատությանը և առանձին գլուխ է նվիրում Ռուսաստանում գործող հայոց դպրոցներին: Հնուց անտի հայ երեխաները կրթվել ու դաստիարակվել են Հայոց հայրապետի անմիջական հովանու ներքո, որտեղ միշտ գործել են այն համոզմամբ, որ նյութական հացից ավելի կարևոր են ոգու լույսն ու գիտությունը: Դպրոցները կառավարվում էին կաթողիկոսի հաստատած հոգաբարձուների խորհրդի կողմից, որը նախագահում էր տեղի հոգևոր առաջնորդը: Կրթօջախի տեսուչից բացի կային նաև թեմական տեսուչներ, որոնց նույնպես հաստատում էր Վեհափառ հայրապետը: «Այսպէս էր ահա՝ Հայոց ազգային կրթական վիճակն ի Ռուսաստան՝ երբ հրաման ելաւ ռուս Կառավարութենէն Հայոց բոլոր կրթական հաստատութիւններն ենթարկել Պետական հսկողութեան և այս հրամանն ելաւ այն ժամանակ, երբ վախճանած էր Գեորգ Դ կաթողիկոսն, որն արդէն ի կենդանութեան պատասխանած էր ռուս Կառավարութեան մանօրինակ մի հրամանին»¹⁷: Դարձյալ հեղինակը զուգահեռներ է անցկացնում հայ և ռուս իրականությունների միջև: Հայկական դպրոցները, կրթարանները միայն գիտելիքների ամբարման աղբյուր էին՝ ի տարբերություն ռուսաստանյան համալսարանների, որոնք հեղափոխական մտքի բորբ ակութեան էին վերածվում: Հայ հասարակությունը, որ իրավամբ հուզվել ու ալեկոծվել էր ազգային արժեքների նկատմամբ այս ոտնձգությունից, ըստ էության գործուն միջամտություն չէր էլ կարող ցուցաբերել: Կրթօջախները գտնվում էին Ամենայն հայոց հայրապետի հոգածության ներքո, իսկ ազգի հովիվը վախճանված էր, և Ռուսաց կառավարությունը ձգտում էր մինչև նոր ընտրությունները իրականացնել իր ծրագիրը Սիմոնի կամ հոգևոր վարչության միջոցով: Բայց վերջիններս չկամեցան այդ պարսավելի քայլի պատասխանատվությունը վերցնել իրենց ուսերին: Սիմոնը կոչ արեց Ռուսաստանի հայոց թեմակալ առաջնորդներին ի մի հավաքվել Մայր աթոռում և հստակ պատասխան պատրաստել: Այսօր կարող ենք արձանագրել, որ հոգևոր հայրերը այդ ժամանակ արժանի պատասխան տվեցին ռուսաց կառավարությանը: Իսկ Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը նկատում է, որ Ս. Էջմիածին չէին ներկայացել ընդամենը երկու հոգի՝ Բեսարաբիայի և Նախիջևանի առաջնորդ Մակար և Վրաստանի ու Իմերեթիայի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսները:

Ժողովը վճռեց, որ ազգի համար այդ հույժ կարևոր հարցը կարող է տնօրինել միայն նորընտիր Վեհափառ հայրապետը: Կովկասի կառավարչապետին ուղղված 1884 թ. սեպտեմբերի 15 թվակիր հեռագրում հստակ ասվում է. «Սիմոն պատի ունի յարգանք յայտնել Ձերդ Պայծառափայլութեան, զի որպէս բազում անգամ խոնարհաբար յայտարարեալ է՝ թե անդամք Նորին չհամարեն ինքեան զիրաւունս անցանել զիրաւասութեամբ Պատրիարք-Կաթողիկոսի, որ նուիրական է վասն Հայաստանեայց Եկեղեցւոյ, զոյնն կրկնէ եւ այժմ, թողլով զտնօրէնութիւն կանոնաց հաստատելոց ի 16 փետր. 1884 ամի, ի բարեհաճ նկատողութիւն բարեխնամ Կառավարութեան»¹⁸:

Սակայն, Մելքիսեդեկ արքեպիսկոպոսի համոզմամբ, Ժողովի ջանքերը ի դերն ելան, ու պատճառն այն էր, որ գահին չբազմեց ժողովրդի ընտրյալը, այլ՝

¹⁷ Մ. Մուրատեանց, նշվ. աշխ., էջ 60:

¹⁸ Անդ., էջ 80:

«Ռուսոյի Ինքնակալէն Կաթողիկոս անուանեալն Մակար, որ պիտի գար վրէժ լուծել Ազգէն, զինքն չընտրելուն համար, և պետական գործիք լինիլ պետական հրամաններն կատարելու համար»¹⁹: Թե՛ն այդ պահին ոմանք միամտաբար հոյս էին փայփայում, թե Մակար կաթողիկոսը կկարողանա շահել Ռուսաց իշխանություններին համակրանքն ու հարցին ազգօգուտ լուծում տալ:

Փակել հայկական դպրոցները նշանակում էր փակել «Հայու սիրտն», «Հայու զգացումն», «Հայու բերանն, լեզուն, Հայու ներկան ու ապագան»: Ո՞ր ձեռքը կհանդգներ փակել այն, ինչ բացվել ու արարվել է հազարավորների ջանքերով: Եվ ինչպե՞ս զրկես անմեղ պատանիներին կրթության հնարավորությունից, եթե ոչ իրենք ու ոչ էլ իրենց ծնողները ոչ մի հանցանք չեն կատարել պետության ու կառավարության դեմ: Ընդամիս, կարևոր հանգամանք էր, որ դպրոցների ծախսերը հոգում էին հայ հասարակության միջոցների հաշվին, և այն բնավ ծանրացած չէր կառավարության ուսերի վրա:

Շատ չանցած պարզ դարձավ, որ կառավարության որոշմամբ և Մակար հայրապետի ստորագրությամբ փակված վարժարանների փոխարեն բացվելու են մեկ և երկդասյան ծխական դպրոցներ, որոնք ոչ մի աղերս չունեին կրթական նախկին համակարգի հետ: Ի տարբերություն վարժարանների, որոնք գործում էին կաթողիկոսի հայրական խնամքի ու հսկողության ներքո, ծխական դպրոցները պետք է վերահսկվեին կառավարության կողմից: Ուսուցիչների և տեսուչների նշանակումն ու աշխատանքից ազատելը ևս դառնում էր կառավարության մենաշնորհը: Այդ «քննախույզ» հայացքից դուրս չէին մնում նույնիսկ Էջմիածնի ճեմարանն ու թեմական դպրոցները: Մուրադյանցի դիտարկումով՝ «Միադասեան եւ երկդասեան ծխական կրթարանաց բացումն մի պատրուակ եղաւ բուն կրթական էական խնդիրն մեոցնելու»²⁰:

Ժամանակի մամուլը արձագանքել է այս անցքերին: Մասնավորապես, «Արևելք» լրագիրն ու «Արևելյան մամուլ» հանդեսը, որոնց հրապարակումը Մելքիսեդէկ արքեպիսկոպոսը զետեղել է գրքի հավելվածում: Հողվածագրի համոզմամբ Մակար եպիսկոպոսը անձամբ բացասական դեր խաղաց դպրոցները փակելու գործում: Դեռևս կաթողիկոսական տեղապահ եղած ժամանակ նա կարող էր միջնորդել, ու չէր բացառվում, որ դա գործուն ազդեցություն կունենար հարցի դրական լուծման ուղղությամբ: Մինչդեռ նա, ընդամենը իր անձի շահերից ելնելով, հնազանդվեց ու իրագործելի դարձրեց ռուսաց կառավարության դավադիր ծրագիրը:

Ականավոր հոգևոր հայրերից շատերը, մասնավորապես Կ. Պոլսի պատրիարքը, նախընտրեցին լուծությամբ անցնել կատարվածի կողքով: Բայց Արևելյան Հայաստանի հասարակությունը, որ միշտ ուշադիր ու զգոն է եղել մատաղ սերունդի կրթության ու դաստիարակության խնդիրների նկատմամբ, բնավ չէր կամենում համակերպվել: Մյուտոնօրհների սուրբ տոնի առթիվ թիֆլիսցիները հեռագիր են հղում Ամենայն հայոց կաթողիկոսին, ուր ասվում է. «...Ապաիհնելով առ Աստուած, մենք լիայոյս ենք, որ Ձերդ Վեհափառութեան ջանքերով կը բացուին մեր դպրոցների այսքան երկար ժամանակ փակ մնացած դռներն, որոց մէջ հայ մանկտիւն ըստ առաջնոյն կը կրթուի Ս. Եկեղեցւոյ հովանեաց տակ: Թիֆլիզի Հայ Հասարակութիւնն ձոր ի ձորոյ գործ կը դնէ իւր բոլոր ջանքն, որպէս զի Ուսումնարանն նման այն ժամանակամիջոցին, երբ Թեմս կառավարում էր Ձերդ Սրբութիւնն, բարոյական եւ կրթութեան բարիքն սերմանէ Հայ մանկանց սրտին մէջ անմիջական դեկավարութեամբ արժանատրագոյն Առաջնորդի Թեմիս»²¹:

¹⁹ Աճ, էջ 62:

²⁰ Մ. Մուրատեանց, Աշվ. աշխ., էջ 66:

²¹ Աճ, էջ 88:

Մուրադյանը նկատում է, որ պատմական բացառիկ դեր է բաժին ընկել Ռուսաստանին՝ հսկայածավալ կայսրությանը, որն իր սահմաններում ներառում է բազում ազգությունների, որոնց մշակութային զարգացումը կարող էր նպաստել և պատիվ բերել երկրին ու իշխանություններին:

Հայ եկեղեցին ու դպրոցը հարյուրամյակներ շարունակ անքակտելի են, միասնությամբ ճակատագրով ու էությամբ, և երբ թուլանում է այդ կապը, տուժում է ազգը: Վկան կաթոլիկ Եվրոպայում ուժացած գաղութները: Մեյքիսեդեկ եպիսկոպոսը հիշում է իր այցը Լեհաստան, ուր հոգևորականները կարդում էին հայկական ձեռագրեր, բայց չէին հասկանում: Նրանք ուրախանում էին իրենց եղբոր՝ հոգևոր գործչի այցից, բայց անկարող էին մայրենի լեզվով շփվել նրա հետ: Դա միայն նրանց դժբախտությունը չէ: Դա համազգային ողբերգություն է: Հեղինակը իր խոհերն ու դիտարկումները ավարտում է համոզմունքով, որ յուրաքանչյուր հայ պարտավոր է վիճակը շտկելու համար միջոցների դիմել: Պետք է դիմել: Ըստ հեղինակի՝ միջոցները շատ են: Բայց նա մատնացույց չի անում եղածներից առավել գործուն ճանապարհը:

А. А. ХУДАВЕРДЯН - Архиепископ Мелкиседек Мурадянц об Армянской церкви и свободе совести. - После выборов католикоса в апреле 1885 года архиепископ Мелкиседек, набравший наибольшее число голосов, но не получивший одобрения русского царя, счел за благо промолчать, будучи уверенным, что любой протест с его стороны будет воспринят как проявление уязвленного самолюбия. Спустя годы, однако, он следующим образом выразил свое отношение к отклонению его кандидатуры: «... о себе лично скажу, что неожиданно была оказана мне большая честь, очень высоко было поднято мое достоинство. Имею в виду - **единодушное избрание** меня возлюбленным моим народом и **отказ** царя. И то и другое великая честь для меня». Он со всею ясностью осознавал, что вопрос был больше и выше каких-либо личностных обстоятельств. Его следовало рассматривать в ряду таких проблем, как права Церкви, свобода Церкви и религии. Эта проблема в том или ином виде существовала еще с V века. Ибо ни один народ Востока не придавал такого значения свободе религии, как армяне, и мученический крест они чаще всего принимали во имя свободы религии.